

## ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գաղտնիք չէ, որ հայ իրականությունը թե՛ հայրենիքի, թե՛ Սփիւռքի մէջ կը դիմակալէ գոյութենական մարտահրաւերներ, որոնց դիմագրաւումը յանձնառութիւնն է պետական, եկեղեցական, քաղաքական, գիտական եւ այլ մարմիններու:

Յիրաւի, մեր առջեւ ծառացած են պետականակերտման, ինքնութենական, ժողովրդագրական, լեզուական, մշակութաբանական, կրթական եւ այլ հիմնախնդիրներ, հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան, արցախեան հարցի եւ այլ օրակարգեր, որոնց յաղթահարումին կրնայ սատարել հայագիտութիւնը, իր ուսումնասիրական տարաբնոյթ հարթակներով:

Այս ելակէտէն մեկնելով, առաւել կը շեշտաւորուի հայագիտութեան կիրառական դերակատարութիւնը՝ համահայկական հիմնախնդիրներու եւ տեղայնական հարցերու հանգուցալուծման գործընթացին մէջ: Արդ, դրական փոփոխութիւններու միտող ռազմավարական ծրագրումի նպատակով՝ ճգնաժամային հիմնահարցեր վերլուծելու, հասկնալու եւ բացայայտելու հիմք կը ծառայէ կիրառական հայագիտութիւնը:

Հետեւաբար, պէտք է հայագիտական ուսումնասիրութիւնները աւելիով ուղղորդել կիրառելիութեան հարթակ, զարկ տալով յաւելեալ լայնածաւալ բազմուսմունք դաշտային հետազօտութիւններու (հետաքննութիւններ, դիտարկումներ, հարցախոյզներ, տուեալներու հաւաքում, ամբարում եւ մշակում, պարագաներու սերտողութիւն (case studies), որոնք յաւելեալ լոյս պիտի սփռեն հիմնախնդիրներու էութեան վրայ:

Սոյն աշխատանքներով հաւաքուած փաստացի նիւթերու գիտական, համակողմանի, համեմատական եւ թափանցիկ վերլուծումը առիթ պիտի ընձեռէ ներկայ վիճակը իրողապէս գնահատելու, ինչպէս նաեւ բանաձեւելու յաւելեալ առարկայական ռազմավարութիւններ, ազգային քաղաքականութիւն մշակող մարմիններուն յուշելու համապատասխան լու-

ծումներ՝ հաւաստի տուեալներու հիմամբ: Դաշտային այս ուսումնասիրութիւնները պարտին ըլլալ շարունակական եւ մնալուն գիտական դիտարկումի ու արժեւորումի ենթարկեն վերոյիշեալ ռազմավարութիւններու եւ համապատասխան լուծումներու իրագործումին ու գործադրութեան յառաջընթացը:

Հայութեան դիմագրաւած մարտահրաւերներուն յաղթահարումը կը պահանջէ շղթայաձեւ, ներդաշնակ եւ միահամուռ համագործակցութեան: Հարկ է, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքի պատկան ու որոշումնառու մարմիններ նոյնպէս զարկ տան եւ սատարեն կիրառական հայագիտութեան, առնուին նաեւ գործադրելի եւ իրատեսական որոշումներ, որոնք դառնան պետական թէ սփիւռքեան հաստատութիւններու քաղաքականութիւն՝ ուղեգիծի վերանայման ու բարեփոխման սկզբունքով:

Այս մօտեցումով, հայագիտութիւնը կը վերածուի նաեւ ազգային կեանքի վերանորոգման գործօնի՝ իր դերը ունենալով հայութեան գոյութենական մարտահրաւերներու դիմագրաւումին մէջ:

## **ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

Անդրանիկ Տազեսեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արմէն Իրնէշլեան, Սիլվա Փափազեան

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Սիլվիա Աճէմեան, Նանօր Գարակէօզեան, Երուանդ Երկանեան, Արտա Էքմէքճի, Հրանուշ Խառատեան, Մուրատ Հասրաթեան, Հրաչ Զիլինկիր-եան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզն Փեթի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գրասենեակ

## APPLIED ARMENOLOGY

It is not a secret that the Armenians both in the fatherland and in the Diaspora are facing existential challenges. It is the undertaking/task of state, church, political, scientific and other Armenian authorities and bodies to address these challenges.

Indeed, we face outstanding issues of state building and identity in addition to demographic, linguistic, cultural, educational and other concerns, as well as the agendas of the Armenian Genocide and Artsakh matters. Armenology with its diverse study disciplines may contribute in overcoming these challenges.

In this regard the role of applied Armenology is further underpinned in the process of resolving outstanding pan-Armenian and local issues.

As a matter of fact, in order to generate a strategic plan, applied Armenology may become the base in analysing, understanding and highlighting the current critical issues.

This is why Armenian studies should further orient field studies with an eye to their applicability. This can be achieved through further supporting and promoting extensive field studies (investigations, observations, surveys, the collection, preservation and cultivation of data, case studies, etc.). These will shed further light on the nature of the above-mentioned basic issues.

The scientific, multifaceted, comparative and transparent study and analysis of the material produced by field studies will enable those responsible to assess the current actual situation in real terms and to formulate and shape further objective strategies to suggest to national decision making bodies that can then offer relevant solutions based on valid data.

These field studies should be continuous, which infers that the above-mentioned strategies and the progress of their application and their corresponding resolution should be permanently under scientific observation and assessment.

To overcome the current challenges of the Armenian space an interconnected, unified and harmonic collaboration is a must. Likewise, relevant decision-making authorities and bodies of both the Armenian State and the Diaspora ought to promote applied Armenology, take realistic and applicable decisions as the basis for policies, and modify and revise them whenever need be.

With such an approach, Armenology also becomes a renovating factor of Armenian national life and plays its role in addressing the existential challenges of the nation.

### **EDITOR-IN-CHIEF**

Antranik Dakessian

### **EDITORIAL BOARD**

Silva Papazian, Armen Urneshlian

### **CONSULTATIVE BODY**

Sylvia Agemian, Megerditch H. Bouldoukian, Seta Dadoyan, Arda Ekmekji, Murad Hasratian, Nanor Karageozian, Hranush Kharatian, Susan Pattie, Hratch Tchilingirian, Yervand Yerkanian

### ***HAR* REPRESENTATIVE IN ARMENIA**

AMAA Yerevan Office